

ԳԼՈՒԽ ԺԱ

Անցան երկու տարի եւ ւաւելի ժամանակ այս դէպքերուն վրայ, ոտնակոխ եղած Յայաստանի այդ հարուստ գաւառաց ժողովուրդը սկսաւ քիչ մը հոգի առնուլ, շինականը իւր տունը դարձեալ շինեց գետնի խորը, զօր ոմանք որչ անուանեցին, առանց մտածելու առանց հաշուելու թէ անտէր, աւազակաց եւ անիշխանութեան մատնեալ Յայաստանի մէջ, ուր յենք, ասպատակք եւ գաղթականք անպատասպար երկիր մը կը դիմէին յամենուստ Քսենոփոնի օրերէն ի վեր, ուրիշ տեսակ տուն շինել անօգուտ էր:

Թեոդորոս կ'աշխատէր՝ կը դիմէր ամէն կողմ, ժողովուրդը կը քաջաւերէր եւ կը պաշտպանէր, մեծամեծները միութեան եւ դաշնակցութեան կը յորդորէր առանց երբեք յաջողելու իւր մտածութիւնը ընդունել տալու համար: Յայտնի դիմադրութիւն ոչ ոք չէր ցոյց տալ, բայց զանխուլ դիմադրութիւն կար, որ անտարբերութիւն նաեւ չէր: Նախարարաց շատերը օտարէն ւաւելի Թեոդորոսէ կը վախէին. այդ մարդուն գործունեութիւնը, պատերազմի մէջ քաջութիւնը, խորհրդոց մէջ առաջնութիւնը, օտարաց առաջ իւր համբաւը, անիրաւութեանց դէմ խստութիւնը միմիայն պատճառ էին իւր առաջադրութեանց ընդունելի չլինելուն: Զեռաւորք՝ Վիրք, Աղուանք եւ Սիւնիք կը միաբանէին, մերձաւորք՝ Անձեւացիք, Արծրունիք, Մամիկոնեանք, Մոկացիք խեթիւ կը նայէին: Թեոդորոս շատ սրամիտ էր, որ չի հասկնար, ոճստի ամէն ջանք ի գործ կը դնէր Վարազտիրոց Ասպետը բերել տալու համար աքսորէն: Իւր բարեկամաց հետ ան անպակաս կը թղթակցէր, եւ հազիւթ գործը կարգի կը դնէր կամ խռովութիւն մը պալատին մէջ կամ որսաց եալ զօրաւոր պաշտօնէի մը փոփոխութիւնը իւր ջանքերէն ի դերել կը հանէին: Եւ իրօք, եթէ Բագրատունեաց նախարարը դարձաւ շատերու մտքին մէջ կշիռ մը կը կազմուէր զօրութեան եւ Թեոդորոսէ երկիւղ կրողները ուրիշ յենակետ մը ունենալով, միաբանութեան դաշինքէն հեռու չէին կենար:

Այս միջոցիս Գրիգոր եւ Սուրեն Դամասկոսի մօտերը իրենց գերութեան շղթայները կը կրէին, նախատանաց՝ դժնդակ ծառայութեանց կը տանէին եւ աչաց առջեւ կը տեսնէին գունդագունդ ուրացողաց թիւը, որ ստրկութեան տառապանաց չդիմանալովդ ազատութիւն կը գտնէին ուրիշ տեսակ մը գերութեան մատնուելով, ուրանալով կրօնից հետ հայրենիք՝ վերջապէս ամէն հին կապերը խզելով, արաբացի կնոջ կամ մարդու մը հետ կապուելով: